««ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

««ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «**Գնահատման գործունեության մասին**» 2005 թվականի հոկտեմբերի
4-ի ՀՕ-189-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածում՝

- 2-րդ մասում.

ա. «առաջարկությամբ առնվազն հինգ» բառերը փոխարինել «առաջարկությամբ առնվազն երկու» բառերով,

բ. «ընդգրկում է առնվազն հինգ» բառերը փոխարինել «ընդգրկում է առնվազն երկու» բառերով,

- 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Որակավորման քննություններին կարող են մասնակցել բարձրագույն կրթություն ունեցող ֆիզիկական անձինք։»։

Հոդված 2. Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում «նվազագույնը հինգ» բառերը փոխարինել «նվազագույնը երկու» բառերով։

Հոդված 3. Օրենքի 24-րդ հոդվածում.

- 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Գնահատողների ինքնակարգավորվող կազմակերպության կարգավիճակը

ծագում է սույն օրենքով սահմանված կարգով, լիազոր մարմնում հաշվառվելու պահից սկսած։ Լիազոր մարմնում կարող են հաշվառվել առավելագույնը երեք ինքնակարգավորվող կազմակերպություններ։»։

- 5-րդ մասում «30» թիվը փոխարինել «10» թվով։

Հոդված 4. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «30» թիվը փոխարինել «10» թվով։

Հոդված 5. Եզրափակիչ մաս

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Հանրապետության նախագահ
Վ.Խաչատուրյան

ՀՕ- -Ն

Երևան, 2024 թ.- -